ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԴՈԿՏ. ՋՈՐՋ ՔԵՐԻԻ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (2 մայիսի 1993 թ., Կարմիր կիրակի)

Ձերդ Սրբություն. եղբայրներ և քույրեր ի Քրիստոս: Բացառիկ շնորհ և հաճույք է այսօր լինել ձեզ հետ այստեղ Ս. Էջմիածնում: Հատուկ հաճույք է այցելել ձեզ Հինանց շրջանում, այնպես որ մենք միասին կարող ենք հայտարարել այն ճշմարտությունը, որ Քրիստոս իսկապես հարյալ: Ես քաղում եմ Ս. Պողոս Առաքյալի Առաջին Նամակից ուր ասում է. «Եւ ամէն շնորհի Աստուածը,—որ ձեզ կոչեց յաւիտենական փառքին Քրիստոս Յիսուսի միջոցով, որին մի փոքր ժամանակ չարչարակից պիտի լինենք,—թող վերականգնի, զօրացնի, հաստատահիմն դարձնի ձեզ»: (1 Թուղթ Պետրոսի Ե-10):

Անգլիական ամենահին գործերից մեկն է ԲԵՈՎՈՒԼՖ դյուցազներգությունը: Այն ստեղծվել է ինչ որ տեղ 680—800 թվականների շրջանում, երբ քրիստոնեությունը Մեծ Բրիտանիայում դեռևս իր մանկությունն էր ապրում: Եվ այն ներկայացնում է մեծ գործերի պատմություն, ուր կան համարյա գերմարդկային հերոսներ և չար հրեշներ: Այդ պատմության մեջ ներհյուսված է պարզ քրիստոնեական հավատքը, Անգլո-սաքսոն աշխարհի քրիստոնեությունը: Մեջբերում եմ դրանից. «Ով էլ որ ապրի երկար երկրի վրա, նա կապրի այս ժամանակների տագնապը և անմաս չի մնա և շատ բարի և շատ չար գործերից»:

Հայաստանի քրիստոնեական արմատները հասնում են ամենավաղնջական ժամանակները: Անշուշտ, դուք ունեք աշխարհում առաջին քրիստոնեական պետությունը լինելու հոչակը: Ձեր քրիստոնեական հավատքը անբաժանելի մասն է այն ինչ կոչվում է հայ էություն: Այն ունի հարստություն և հընչեղություն, որը եզակի է: Սակայն Հայաստանի և Հայ Եկեղեցու պատմությունը մեկն է ամենամեծ տառապանքի և դժբախտության: Կրկին ու կրկին ձեր երկիրը ենթարկվել է ներխուժումների: Կրկին ու կրկին ձեր սուրբ վայրերը ավերվել են և Եկեղեցին հալածվել: Իրոք, դուք զոհն եք դարձել այս և բոլոր ժամանակների տագնապի: Ձեր քրիստոնեական հավատքի ճշմարտության վկայությունը ամենադաժան ցեղասպանության (փաստի առկա-

յության) ֆոնի վրա և ձեր ինքնության պահպանումը, նույնիսկ երբ ձեր ժողովուրդը բռնի տեղահանվել, վտարանդվել է իր երկրից և սփռվել աշխարհով մեկ-պատկառազդու դաս է մեզ բոլորիս՝ համաշխարհային Եկեղեցու անդամներիս համար: Դուք ինքներդ ձեր մեջ կրում եք վկայությունը քրիստոնեական ճշմարտության զորության, այն է՝ փրկվել և բարգավաճել ի հեճուկս ճակատագրի բոլոր քմահաճույքների:

Սուրբ գրքի այն մասում, որ ես օգտագործեցի, Ս. Պետրոսը խոստանում է նրանց, ում նա դիմում է, որ Աստված կատարյալ ընե, հաստատե ու զորացնե ամուր հիմքի վրա: Այս բոլորը բաներ են, որ ակնարկում են, թե Աստված հատուկ և անձնական հետաքրքրություն է ցուցաբերում իր այն զավակների հանդեպ, ովքեր տառապում են հանուն իրեն:

Առաջին.—տառապել հաճախ նշանակում է, որ մենք ինչ-որ ձևով տկարացած ենք ու վիրավորված: Երբ Եկեղեցին տառապում է, նրա գործունեության ամբողջ ծավալները միշտ չեն կարող հստակորեն ուրվագծվել: Երբ մենք տառապում ենք, մենք ինչ-որ ձևով զրկվում ենք մեր կատարելությունից: Աստված, ինչևէ, ցանկանում է, որ մենք լինենք կատարյալ: Նա ցանկանում է, որ մենք լինենք անթերի: Եվ այդ պատճառով է, որ նա երբեք չի փորձում մեզ մեր կարողությունից վեր: 14-րդ դարի անգլիացի կին միստիք Ջուլիանը Նորիջից գրել է. «Հիսուսը չասաց, որ ձեզ չեն փորձի: Նա չի ասել, որ ձեզ փորձության չեն ենթարկի: Սակայն նա, անշուշտ, ասել է, որ դուք չեք պարտվի»:

Այսպիսով, մեր հավատքը առ Աստված դարձնում է մեզ կատարյալ և անթերի: Այս կատարվում է համաձայն Իր պայմանների՝ ոչ մեր: Այսպիսով մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի իմանանք ինչ է նշանակում կատարելությունը և անթերիությունը մեզ համար: Մենք պետք է վստահ լինենք, որ Աստված կատեղծի կատարելություն մեր ներսում և այս և մյուս կյանքում:

Երկրորդ.—Աստված մեզ կհաստատե. հունարեն այս բառը բառացի նշանակում է հիմք գցել: Այդ նշանակում է, որ մեր տառապանքի մեջ մենք նշմարում ենք Աստծուն, որի վրա է կառուցված մեր էությունը: Աստվածայնությունը, որ ընդգծում է մեր մարդկայնությունը:

Նույնիսկ մեծ տառապանքի ժամանակներում եկեղեցին զորանում է: Գուցե ես պետք է ասեմ՝ հատկապես մեծ տառապանքի ժամանակներում է եկեղեցին զորանում: Քանի որ քրիստոնյաները հանդես են գալիս ի պաշտպանություն ճշմարտության ընդդեմ աշխարհի կեղծիքի, այդ ճշմարտությունը դառնում է պայծառորեն գրավիչ: Մարդկանց դեպի իրեն է ձգում ճշմարտությունը և այն տիրում է նրանց: Աստված հաստատվում է նրանց սրտերի մեջ և այսպիսով եկեղեցին զորանում է և ծաղկում ապրում:

Երրորդ.—Աստված զորացնում է մեզ: Մեր տառապանքի միջով մենք գալիս ենք ավելի խորը հասկանալու, թե ինչ է հավատքը: Մենք ի վիճակի ենք գնահատելու և՛ ցավը, և՛ ուրախությունը: Մենք ի վիճակի ենք քննության ենթարկելու հավատքի անհրաժեշտ մասերը: Մենք իմանում ենք ինչն է կարևոր: Այս ձևով մեր հավատքը դառնում է հասուն և ամուր: Այն զորու է դառնում ճանաչելու Աստծո գործունեությունը ամենաանսպասելի տեղերում: Ժամանակակից անվանի Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ, հոգևոր գրող Հայր Հարրի Ուիլիամսը գրել է. «Աստված միշտ ներկա է, սպասում է, որ հայտնագործվի այժմ, ներկա պահին, տառացիորեն որտեղ ենք մենք գտնվում և ինչ ենք մենք անում»:

Հավատքի մեծ զորություն է պահանջվում մարդուց, որ նա կարողանա խորը տառապանքի տեսանկյունից ընկալել ամբողջ աշխարհով մեկ Աստծո գործունեությունը: Սակայն որպես քրիստոնյաներ մենք ճանաչում ենք Աստծո գործը Քրիստոսի խաչելության մեջ և այս հաստատվել է մեզ համար հարության փառքով:

Ձեր Ս. Գրիգոր Նարեկացու գրվածքներում ես գտա հետևյալ տողերը. «Ես, որ կործանված էի, այժմ կանգնած եմ ամուր: Ես թշվառ էի և հաղթական եմ Քրիստոսով և իր Հորով հանուն ճշմարտության ոգու: Զորություն և փառք նրանց եզական Աստվածությանը»:

Տառապանքի այս արձագանքը պարփակում է գրեթե այն ամենը, որ ես ասել եմ: Ես ցանկանում եմ ավարտել խոսքս իմ եկեղեցու, Անգլիկան Եկեղեցու տառապանքի և հավատքի մի պատմությամբ.

Մարի թագուհու օրոք շատ տղամարդիկ, կանայք և երեխաներ կենդանի այրվեցին խարույկի վրա Անգլիայում, քանզի նրանք ամուր մնացին իրենց հավատքի վրա: Նրանց մեջ էին Լաթիմեր և Ռիդլի Եպիսկոպոսները, որոնց այրեցին խարույկի վրա Օքսֆորդում 1555 թվականին: Մինչ կրակի բոցերը ավելի էին զորանում, Լաթիմեր Եպիսկոպոսը գոչեց. «Հանգիստ եղիր, եղբայր Ռիդլի և տղամարդու պես պահիր քեզ: Մենք այսօր Աստծո շնորհիվ Անգլիայում այնպիսի մոմ կվառենք, որ ես հավատում եմ, երբեք չեն կարողանա հանգցնել»:

Հայ Եկեղեցին աշխարհի համար վառել է հավատքի և հույսի այդպիսի մոմ: Եվ այսպիսով ես ողջունում եմ Ձեզ որպես քույր եկեղեցու և շնորհակալություն եմ հայտնում ձեր բարեսիրտ արիության և սրբանման ցնծության համար:

Խաղաղություն ընդ ձեզ, որ ի Քրիստոս եք: